

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

ДІЕГІІЕГІАДОУ

ديجيجادو

Հրատարակումին Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



**ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆՍՈՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ  
27 Սեպտեմբեր 2015**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

**ԽՄԲԱԳԻՐ**  
Շաքլ Մարգարեան

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ**  
**ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**  
Պերճ Թերզեան

**ՍՐԲԱԳՐԻՉ**  
**ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**  
Անայիս Ճիգմեճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ**  
**ՁԵՒԱԽՐՈՒՄ**  
Շահէ Լուսարարեան

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ**  
**ՇԱՐՈՒՄԾԸ**  
Վարդուհի Արթինեան

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**  
Nubar Printing Press

**Թիւ 77 Նոր Շրջան**  
**ՇՈՎՏԵՄԲԵՐ 2015**

**Գահիրեի ՀԲԸՄ-ի**  
**լուրերուն հետեւեցէք**  
**www.agbuegypt.com**  
**կայքէջով**

**Սրբալոյս Միւռնօրինեքի Արարողութիւնը Մայր Աթոռ**  
**Ս. Էջմիածնի Մէջ** 1  
«Տ»

**Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց 20-րդ Կաթողիկոս-**  
**Պատրիարքի Գահակալութեան Արարողակարգը** 3  
«Տ»

**Հաղորդագրութիւն. Փոր Սահտի Դամբարանի Բացման**  
**Արարողութիւնը** 4

**ՀԲԸՄ-ի Հայկական Համացանցային Համալսարանի**  
**Գահիրեի Մասնաճիւղի Ճատրակի Ակումբի**  
**Վկայականներու Բաշխում** 5  
«Տ»

**Համալսարանական Յաջողութիւն** 7

**Մահուան Ու Բռնութեան Դեմ Պայքարի Խորհրդանիշը՝**  
**Մեծ Եղեռնը Վերապրած Արորա Մարտիկանեան** 8  
«Տ»

**Ծաղկայարդարման Արուեստի Ներկայացում**  
**Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Մէջ** 10  
*Սօսի Ներքտեան-Յակոբեան*

**Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ Ախոյեան Կը Հանդիսանայ**  
**ՀՄԸՄ Կամքի 2015-ի Տարեկան Մրցաշարքին** 11  
*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան*

**Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ Յաղթական՝ ՀՄԸՄ**  
**Արարատի Պասքէթ Պոլի Տարեկան Մրցաշարքին** 12  
*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմեճեան*

**Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2015-ի Պասքէթ Պոլի**  
**Մրցաշարքը** 13  
*Սօսի Ներքտեան-Յակոբեան*

**Մահ՝ Անդրո Վարժապետեանի** 16

**Մահ՝ Հայկ Թելլալեանի** 16



# ՍՐԲԱՎՈՅՍ ՄԻՌՈՆՅՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ

2015 Սեպտեմբեր 27-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, հանդիսապետութեամբ Ամենայն Յայրոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի, տեղի ունեցաւ Սրբալոյս Միւռնօրհնութիւնը, որ ձօնուած էր Յայրոց Յեղասպանութեան Սրբադասուած Նահատակներու 100-րդ տարելիցի յիշատակին:



Այսպիսով, Ամենայն Յայրոց Կաթողիկոսի ձեռամբ, Վարազայ Ս. Խաչի տօնին օրը, օրհնուեցաւ 21-րդ դարու երրորդ, իսկ նորանկախ Հայաստանի պատմութեան ընթացքին չորրորդ Միւռնը, եւ կոչուեցաւ Յաղթութեան Միւռն:

Եօթը տարին անգամ մը կատարուող Միւռնօրհնութեան սրբազան արարողութեան ներկայ էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան եւ ՀՀ կառավարական ներկայացուցիչներ, ՀՀ ԱԺ պատգամաւորներ, Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ Նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչներ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչներ, Յայ Առաքելական Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներ ու թեմական պատուիրակութիւններ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներ, ազգային բարերարներ, մշակոյթի եւ գիտութեան գործիչներ, Հայաստանէն եւ աշխարհասփիւռ համայնքներէն ժամանած բազմահազար հայորդիներ:

Հայրոց Եկեղեցւոյ հոգեւոր դասին եւ համայն հայ ժողովուրդին աղօթակից էին Ուղղափառ հետեւեալ եկեղեցիներու պատուիրակներն ու ներկայացուցիչները՝ Ղատի, Հնդիկ Մալապար, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարքութեան, Աղեքսանդրիոյ եւ Համայն Ափրիկէի Յոյն Պատրիար-

քութեան, Ռուսիոյ, Սերպիոյ, Ռումանիոյ, Չեխիոյ, Ալպանիոյ, Կիպրոսի, նաեւ Կաթողիկէ հետեւեալ եկեղեցիներու ներկայացուցիչները՝ Զոմի, Հայ, Յոյն, Ասորի, ինչպէս նաեւ՝ Անկլիքան եւ Ֆինլանտայի Լուտերական եկեղեցիներու ներկայացուցիչները:

Արարողութիւնը սկսաւ երեկոյեան ժամը 5-ին: Վեհափառ Հայրապետը, հոգեւոր դասով ու հանդիսաւոր թափօրով շրջապատուած, վեհարանէն ուղղուեցան նախ դէպի Մայր Տաճարի Իջման Ս. Սեղան եւ Տերու-

նական աղօթքէն ետք, Մայր Տաճարի գանգերու աւետաքեր ղօղանջներու եւ շարականներու ներքոյ ապա խաչերու եւ խաչվառներու առաջնորդութեամբ, ուղղուեցան Ս. Տրդատի Բաց Խորան, ուր տեղադրուած էր Միւռնի արծաթեայ կաթսան:

Վեհափառ Հայրապետի ընթերականերն էին՝ Երուսաղէմի Յայրոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրիան Արքեպս. Մանուկեանը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ, Գերշ. Տ. Սուշեղ արքեպս. Մարտիրոսեանը: Չոյգ բուրվառակիրներու առջեւէն, եկեղեցական շապիկով, կը քալէր Ս. Միւռնի կնքահայրը՝ Մայր Աթոռի բարերար, գանատահայ Հայկ Թիթիզեանը:

Վեհափառի աջ եւ ձախ կողմերէն ընթացող եպիսկոպոսները կը տանէին Միւռնօրհնէքի համար անհրաժեշտ Հայ Եկեղեցւոյ աւանդական սրբազան մասունքները:

Բաց Խորանին վրայ, նախ բուրվառակիրները խնկարկեցին Սրբալոյս Միւռնի կաթսան, յետոյ Հին եւ Նոր Կտակարաննե-



րէն հատուածներ ու Ս. Միւռնիկն նուիրուած աղօթքներ ընթերցուեցան:

Յետոյ խորան հրաւիրուեցաւ Միւռնիկ կնքահայրը, որ Մայր Աթոռի լուսարարապետ Գերշ. Տ. Յովնան եպսկ. Յակոբեանի օգնութեամբ, բացաւ Ս. Միւռնիկ կաթսան:

Այնուհետեւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը Ս. Միւռնիկ կաթսային մէջ լեցուց ծաղկանց հիւթը, բալասանը եւ սրբազան աւանդութեան համաձայն հին Միւռնը՝ նորին փոխանցելով Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով օրհնուած սրբալոյս Միւռնիկ գօրութիւնը, ինչպէս նաեւ Անթիլիասի մէջ օրհնուած նոր Միւռնը: Ապա Նորին Սրբութիւնն օրհնեց նոր Միւռնը եւ խառնեց Կենաց Փայտի մասունքը կրող խաչով, Ս. Գեղարդով ու Յայոց հաւատքի հայր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով:

Ապա Վեհափառ Յայրապետն իր պատգամն ուղղեց ներկաներուն ու համայն հայութեան, որմէ յետոյ Նորին Սրբութիւնը, եպիսկոպոսաց դասը եւ կնքահայրը, համբուրեցին նորօրհնեալ Միւռնիկ կաթսան:

Արարողութիւնն իր աւարտին հասաւ Տերունական աղօթքով: Յետոյ Վեհափառը Ս. Գեղարդով օրհնեց ներկաները, ապա բոլորին հնարաւորութիւն տրուեցաւ հպելու կաթսային եւ ստանալու նոր Ս. Միւռնիկ օրհնութիւնը:

\* \* \*

Սրբալոյս Միւռնիկ հիմնական բաղադրիչը ձիթենիի անարատ իւղն է, որուն կը խառնուի բալասան, ինչպէս նաեւ քառասուն տեսակի տարբեր հոտաւետ խունկերու, ծաղիկներու, անուշահոտ բոյսերու արմատներու, ծաղկաջուրերու, իւղային հիւթերու եւ տերեւներու միաշաղախուած հեղուկը: Զեղուկով լի կաթսան 40 օր կը դրուի Մայր Տաճարի Աւագ Սուրբ Խորանին վրայ եւ նրբահիւս շղարշով կը ծածկուի:

Միւռնութիւնը նախընթաց 40 օրերուն ընթացքին, ամէն օր երեկոյեան ժամերգութենէն ետք, յատուկ հոգեւոր պաշտօն կը կատարուի՝ շարականներով, աղօթքներով եւ սուրբ-գրային ընթերցուածքներով:

Իսկ նախատօնակին՝ գիշերը, հսկում կը



կատարուի:

Միւռնութիւնը յաջորդ օրը, բոլոր թեմերու առաջնորդները Սուրբ Միւռնէն բաժիններ կը ստանան, որմէ ետք Միւռնիկ կաթսան՝ շղարշով ծածկուած, 7 օր շարունակ կը մնայ Մայր Տաճարի Աւագ Սուրբ Խորանին վրայ, ի համբոյր հաւատացեալներու եւ ուխտաւորներու:

Յայ Եկեղեցւոյ որոշ արարողակարգեր իրենց «կնքահայրեր»ը կ'ունենան, ինչպէս Ջրօրհնէքը կամ Միւռնութիւնը:

Սրբազան աւանդութեան համաձայն, երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Սրբալոյս Միւռնիկ օրհնութիւն կատարեց, Միւռնիկ կնքահայրութեան պատիւը շնորհեց հայոց Տրդատ արքային, որ ստանձնեց հայութեան համար պատրաստուած հրաշագործ իւղի պաշտպանութիւնն ու հովանաւորութիւնը:

Միւռնութիւնը ժամանակ իր մասնաւոր դերակատարումը կ'ունենայ «Միւռնիկ կնքահայրը», որ կը ներկայացնէ համայն հայութիւնը: Կնքահօր առաքելութիւնն է՝ Միւռնութիւնը թափօրին մէջ, ծիսական մետաքսէ շապիկ հագած, անմիջապէս Կաթողիկոսին քովէն քալել, ապա խորան բարձրանալ ու կաթսան բանալ:

Միւռնիկ կնքահայրը սովորաբար կ'ընտրուի՝ հաշուի առնելով ազգային-եկեղեցական կեանքին մէջ տուեալ անձին ունեցած աւանդը: Կնքահայրութիւնը նաեւ Եկեղեցւոյ գնահատանքն է ազգային-եկեղեցական կեանքէն ներս անոր ունեցած կարեւոր աւանդին եւ գործունէութեան:



## **ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ 20-ՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ**

2015 թուականի Յուլիս 24-ին, Չմմառու աթոռանիստ մայրավանքին մէջ, Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Սիւնհոդոսական հայրերը յայտարարեցին Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, 20-րդ Կաթողիկոս-Պատրիարքին անունը՝ Արիհապատիւ Տէր Գրիգոր Եպիսկոպոս Կապրոյեան, որ ընտրեց Գրիգոր-Պետրոս Ի. անունը:



Կաթողիկէ Հայոց նորընտիր Կաթողիկոս-Պատրիարքը հայերէնով, արաբերէնով եւ ֆրանսերէնով քարոզ տուաւ, որուն մէջ իր ուրախութիւնը եւ գոհունակութիւնը յայտնեց նուիրապետական երկու աթոռներուն՝ յանձինս Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետներուն, որոնք իր ընտրութեան առաջին իսկ օրէն եղբայրական սիրով իրենց աջակցութիւնը յայտնե-

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց նորընտիր Գրիգոր-Պետրոս Ի. Կաթողիկոս-Պատրիարքի գահակալութեան արարողակարգը տեղի ունեցաւ Կիրակի, 9 Օգոստոսի յետմիջօրէի ժամը 5-ին, Չմմառու աթոռանիստ Ս. Տիրամօր վանքի շրջափակին մէջ՝ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Սիւնհոդոսի արքեպիսկոպոսներուն եւ եպիսկոպոսներուն հրաւերով:

Արարողութեան ներկայ էին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս, Հռոմի Ս. Աթոռի Արեւելեան եկեղեցիներու Ժողովի ներկայացուցիչներ, Լիբանանի մէջ պապական նուիրակը, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ներկայացուցիչը, հայ եւ օտարազգի բարձրաստիճան հոգեւորականներ, առաջնորդներ, միաբան հայրեր, համայնքային ներկայացուցիչներ, պետական եւ զինուորական անձնաւորութիւններ, երեսփոխաններ, կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

Գահակալութեան խորհրդաւոր արարողութեան ընթացքին, Գրիգոր-Պետրոս Ի. Կաթողիկոս-Պատրիարքը, մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ եպիսկոպոսաց դասին՝ սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց: Ապա նոր հայրապետին յանձնուեցաւ պատրիարքական գաւազանը, որմէ ետք ղօղանջեցին Չմմառու վանքի զանգերը՝ աւետելու գահակալութեան բարի լուրը:

Յընթացս պատարագին, Տանն Կիլիկիոյ

ցին:

Գահակալութեան արարողութեան եւ պատարագի աւարտին, Գրիգոր Պետրոս Ի. Կաթողիկոս-Պատրիարքը տեղւոյն վրայ ընդունեց բարձրաստիճան հիւրերու եւ հոգեւորականներու շնորհաւորանքները:

Լիբանանի մէջ պապական նուիրակ, Գերապայծառ Կապրիէլ Զաչիա, կարդաց Հռոմի Ֆրանսիս Սրբազան Զահանայապետի պատգամ-ուղերձը եւ օրհնութեան գիրը՝ Գրիգոր Պետրոս Ի. Կաթողիկոս-Պատրիարքի գահակալութեան առիթով, որուն մէջ նորընտիր պատրիարք հօր կը շնորհէր «եկեղեցական հաղորդութիւն» խնդրուած նոյնիքն Գրիգոր Պետրոս Ի.էն:

Պատարագի աւարտին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ, Գերաշնորհ Տ. Նաթան արքեպս. Յովհաննիսեան, նորընտիր Պատրիարքին փոխանցեց Գարեգին Բ. Վեհափառին օրհնութիւնը, շնորհաւորական խօսքը, ողջոյններն ու բարեմաղթանքները եւ յուշանուէր մը:

Խօսք առաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս, որ շնորհաւորեց Հայ Կաթողիկէ համայնքը եւ հոգեւորականաց դասը՝ նոր Պատրիարքի ընտրութեան առիթով, եւ լանջախաչ մը նուիրեց Գրիգոր Պետրոս Ի. Կաթողիկոս-Պատրիարքին:

«Տ»



**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**Հարիւրամեակին Զուգահեռ**  
**ՓՈՐ ՍԱԽՏԻ ԴԱՄԱՐԱՆԻ**  
**ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ**



1915-ի ծանր օրերուն մուսալեռցիք, գաղթեն աւելի նախընտրելով դիմադրութիւնը, լեռ բարձրացած էին եւ աւելի քան քառասուն օրեր դիմադրած թրքական օրինաւոր բանակին եւ անոր միացած հրոսակախումբերուն, մինչեւ որ պաշարուած, զէն ու պարէն սպառած, ստիպուէր էին օգնութիւն խնդրել ֆրանսական նաւերէն, որոնք բանակցութիւններէ ետք փոխադրած էին զիրենք եւ տեղաւորած Փոր Սախտի մէջ:

Մինչեւ 1919 թուականը Փոր Սախտ ապրած հայերը, կազմակերպուած վրանաքաղաքի կողքին պարտաւորուէր էին նաեւ գերեզմանատուն մը ունենալ: Յետագային, հոն թաղուած անձերուն աճիւնները փոխադրուած էին Օրթոտոքս քրիստոնեաներուն համար յատկացուած գերեզմանատուն եւ ամփոփուած հաւաքական դամբարանի մը մէջ:

Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով, Գահիրէի Ե.Գ.Մ. Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ եւ Զաղաքական ժողովին որոշումով, ձեռնարկուած էր վերանորոգել Փոր Սախտի յիշեալ հաւաքական դամբարանը:

Ճարտարապետուհի Նայիրի Համբիկեանի հեղինակած նախագիծով ոչ միայն վերանորոգուած, այլեւ հոն բարձրացուած է ամբողջովին նոր դամբարան-յուշակոթող

մը, որուն բացման եւ օրհնութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Փոր Սախտի մէջ, Ուրբաթ, 16 Յոկտեմբեր 2015-ին, հոժ բազմութեան մը ներկայութեան:

Հոգեհանգստեան արարողութիւնը տեղի ունեցաւ հանդիսապետութեամբ Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Աշոտ Սրբազան Եպիսկոպոս Մնացականեանի եւ մասնակցութեամբ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հոգեւոր դասին:

Արարողութեան ներկայ էին նաեւ Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան, ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեան եւ դեսպանատան աշխատակիցներ, Գահիրէի Թեմական Ժողովի Ատենապետ Տիար Նուպար Սիմոնեան, ինչպէս նաեւ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Զաղաքական ժողովներու ատենապետները եւ Թեմական գոյգ ժողովներու անդամներ:

Ներկայ էին նաեւ Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Փոր Սախտի Առաջնորդ Անպա Սամուէլի կողմէ երկու քահանաներ, նաեւ եգիպտական մամուլի թղթակիցներ:

Եկած էին իրենց խունկն ու աղօթքը ծխելու եւ յարգանքի տուրքը տալու ոչ միայն Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայ գաղութին անդամները, իրենց մեծով ու պզտիկով, երիտասարդներով եւ սկաւառական շարքերով, այլեւ Այնճարէն յատկապէս այս

*շար. էջ 7* →



## **ՀԲԸՄ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒՅՄԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԱՀԻՐԷԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՃԱՏՐԱԿԻ ԱԿՈՒՄԲԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ**

Շաբաթ, 24 Յոկտեմբեր 2015-ի երեկոյեան ժամը 6-ին, Գահիրեի ՀԲԸՄ-ի Հելիոպոլսոյ Չագըր Մշակութային Կեդրոնին մէջ, տեղի ունեցաւ ՀԲԸՄ-ի Հայկական Համացանցային Համալսարանի (ՀՀՀ-ի) Գահիրեի մասնաճիւղի «Ճատրակի Դաստիարակչական Ծրագիր»-ի առաջին բաժնի շրջանաւարտներու վկայագրերու բաշխումը:

Մշակութային սոյն միջոցառման ներկայ գտնուեցան ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրեի ՀԲԸՄ-ի ղեկավարներ, եկեղեցւոյ, մամլոյ ներկայացուցիչներ, եգիպտահայ համայնքի անդամներ:

Բարի գալուստի եւ բացման խօսքով հանդէս եկաւ Գահիրեի ՀԲԸՄ-ի Վարչութեան ատենապետ Տոքթ. Վիգէն Ծիգմեճեան: «Առաջին անգամն է որ մեր քով տեղի կ'ունենայ ճատրակի վկայագրերու բաշխում, հակառակ որ ճատրակը միշտ հետաքրքրած է մեր գաղութին անդամները:

Երկու տարի առաջ ՀԲԸՄ-ՀՀՀ-ի ճատրակի առցանց դասընթացքները սկսան Գահիրեի ՀԲԸՄ-ի Չագըր Մշակութային Կեդրոնին մէջ:

Տարի մը առաջ՝ 2014-ի Յոկտեմբերին, ՀՀՀ-ի Եգիպտոսի ներկայացուցչութեան կցորդ Տիկին Աննա Տոլապճեան-Թրայեանի առաջարկով, սկսաւ ճատրակի խմբային դասընթացքը: Այսպիսով, ՀՀՀ-ի ճատրակի Առցանց Դասընթացքի առաջին շրջանաւարտներուն հետ, եգիպտահայ համայնքը կը վերականգնէ իր երկարամեայ աւանդութիւնը՝ նոր տեսանկիւնէ, արհեստագիտական նորագոյն միջոցներով ներկայացնելով ճատրակը՝ իր մարզական ծրագրին մէջ», - ըսաւ Վիգէն Ծիգմեճեան:

Այս ան հրաւիրեց տիկին Աննա Տոլապճեան-Թրայեանը՝ ներկայացնելու ՀՀՀ-ի գործունեութիւնը եւ բացատրութիւններ տալու դասընթացքներուն մասին:

Տիկին Աննան ըսաւ. «ՀԲԸՄ-ՀՀՀ-ի կրթական ծրագիրը շատ մեծ յաջողութիւն ար-

ձանագրած է Սփիւռքի եւ աշխարհի տարածքին: Արդէն տարբեր երկիրներու եւ ազգութիւններու պատկանող 4000 աշակերտ գրանցուած են: Եգիպտոսէն ցարդ 20 աշակերտ ունեցած ենք, ներառեալ ճատրակը: Մեր՝ համեմատաբար նօսր համայնքէն, ճատրակի դասընթացքներուն մասնակցելու համար երկու տարի առաջ արձանագրուեցան 12 հոգի, սակայն շրջանաւարտ եղան 10 հոգի: Տարիքային մեծ տարբերութիւն կար խումբին մէջ, որ սակայն, արգելք չհանդիսացաւ դասընթացքները շարունակելու: Ընդհանուր հետաքրքրութիւնն ու սերը ճատրակին հանդէպ, համախմբեց զանոնք եւ հնարաւորութիւն տուաւ յաջողութեամբ աւարտելու առաջին շրջանը:

Մեր շրջանաւարտները, անցնելով ճատրակի դասընթացքներու առաջին ու երկրորդ աստիճանները, խրախուսուելով ՀՀՀ-ի Երեւանի ճատրակի հրահանգիչ Վահագն Զալանթարեանի եւ համակարգող Արփիկ Թաւաքալեանի կազմակերպած դասերէն ու ցուցմունքներէն, ցանկութիւն յայտնեցին մասնակցելու նաեւ յաջորդ շրջանի ընդլայնուած, երրորդ աստիճանի դասընթացքներուն:

Միաժամանակ խումբը հիմնադրած է ՀԲԸՄ-ՀՀՀ-ի Եգիպտոսի ճատրակի Ակումբ, որ շատ աշխոյժ գործունեութիւն ծաւալած է՝ կանոնաւոր կերպով առցանց կազմակերպելով մրցահանդէսներ, մրցաշարեր եւ հանդիպումներ: Ակումբը կազմած է նաեւ իր Դիմատետրային (Facebook) խումբը, որ բաց է ճատրակի սիրահար եգիպտահայ ռեւէ անդամի համար»:

ՀՀՀ-ի գործունեութեան մասին տեղեկութիւն տուող կարճատեւ տեսերիզի ցուցադրումէն վերջ, Տիկին Աննան դարձեալ խօսեցաւ ՀՀՀ-ի Գահիրեի ճատրակի խումբին գործունեութեան՝ եւ մասնաւորաբար այն անդամներուն մասին, որոնք սիրալուծար ստանձնած են ուսուցիչ-աշակերտ դերը՝ զուգահեռաբար սորվելով եւ սորվեցնե-



լով: Անոնք են՝ Գեորգ Աւանեան, Վարդան Շուշանեան, Էտի եւ Խաչիկ Գասապեաններ:

«ՀՀՀ-ն ճանաչողական հնարաւորութիւն կը ստեղծէ ե՛ւ հայերու, ե՛ւ օտարներու համար: -Իր խօսքը շարունակեց տիկին Աննա: -Միայն լեզուին տիրապետելը չի բաւեր, պետք է ազգի մը ամբողջ մշակոյթին տիրապետել՝ հասկնալու եւ ճիշդ խօսելու համար լեզուն: Ուրեմն, օտարներու կողմէ հետաքրքրութիւն ցուցաբերուած է ՀՀՀ-ի կազմակերպած ոչ միայն Հայոց Լեզուի, այլ նաեւ՝ պատմութեան, ճարտարապետութեան, երաժշտութեան եւ մշակոյթի այլ ճիւղերու հանդէպ:

Կ'ուզեմ տեղեկացնել ձեզ ՀՀՀ-ի մէջ մեկնարկուած վերջին նորոյթին մասին: ՀՀՀ-ն առցանց լոյս ընծայած է Ելեկտրոնային Գիրքը (E-Book), որ Հայաստանի մասին գիտելիքներու եւ տեղեկատուութեան մեծ աղբիւր մըն է»:

Տիկին Աննայի խօսքէն յետոյ, համակարգիչով՝ Skype Call-ով կապ հաստատուեցաւ ՀՀՀ-ի Հայաստանի ներկայացուցիչներ Նայիրա Գասապեանի, Յասմիկ Զալափեանի, Արփինէ Թաւաքալեանի եւ ճատրակի ուսուցիչ՝ Վահագն Զալանթարեանի հետ, որոնք ողջունեցին միջոցառման մասնակիցները, ջերմօրէն շնորհաւորելով եւ բարեմաղթանքներ յղելով շրջանաւարտներուն:

Անոնք կարեւորեցին Գահիրէի մէջ ճատրակի Ակումբին հիմնադրումը: Այս կապը կ'ընթանար Սփիւռք-Հայաստան անբաժա-

նելի կամուրջը խորհրդանշող Կոմիտասեան «Կռունկ»ի թովիչ հնչիւններու ուղեկցութեամբ (ջութակի նուագակցութեամբ):

Միջոցառումը կ'ընդգրկէր նաեւ մշակութային բաժին մը: Ջութակի եւ դաշնամուրի զուգակցմամբ ելոյթ ունեցան Հայաստանէն ժամանակաւորապէս Գահիրէ հաստատուած Լիլիթ Նահապետեան (ջութակ) եւ Ժաննա Գեորգեան (դաշնամուր), կատարելով հայկական եւ դասական երաժշտութեան սմոյշներ:

Վերջապէս մօտեցաւ միջոցառման կարեւոր բաժինը՝ վկայականներու տուչութեան կարգը: Տոքթ. Վիգէն Ճիգմեճեան, շնորհաւորեց եւ վկայականները յանձնեց շրջանաւարտներուն՝ Անդրանիկ Յակոբեան, Արին Սիմոնեան, Մեսրոպ Ղազէլեան, Ռոճեր Սուրօ, Տանիէլ Գալլալեան եւ Րաֆֆի Սաատ: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց չորս ուսուցիչ-աշակերտներուն՝ իրենց պատրաստակամութեան եւ ջանքեր չինսայելուն համար: Վերջիններս, վկայականներէ զատ, ստացան նաեւ շնորհակալագրեր:

Ապա, Տիկին Աննա Տոլապճեան իր եզրափակիչ խօսքին մէջ, շնորհակալութիւն յայտնեց Գահիրէի ՀԲԸՄ-ի Վարչութեան անդամ Տիկին Ռուպինա Ասլանեան-Նորարեւեանին, միջոցառման արհեստագիտական մասը անխոնջ կերպով կազմակերպելուն համար, որմէ յետոյ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն մը:

«Տ»



← շար. էջ 4-էն

առիթով ժամանած տասնչորս հոգիևց պատուիրակություն մը:

Գերեզմանատունը խճողուած էր լուռ եւ յուզուած ամբոխով մը: Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, խօսք առին նախ Առաջնորդ Աշոտ Սրբազան Եպս. Մնացականեանը, յետոյ՝ Մուսա Լերան Հերոսամարտի 100-րդ տարելիցի Յանձնախումբի Նախագահ Եսայի Հաւաթեանը:

Որպէս երախտիքի եւ շնորհակալութեան արտայայտութիւն, Այնճարի պատուիրակութեան կողմէ, Այնճարի Զաղաքապետ Կարօ Փամպուլեանը, յանուն «Համայն աշ-

խարհի մուսալեռցիներ»-ու, յուշատախտակ մը յանձնեց, զոր ստանալու հրաւիրուեցաւ Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ Տիար Նուպար Սիմոնեան:

Արարողութեան վերջաւորութեան ծաղկեպսակներ գետեղուեցան Գահիրէի Ազգային իշխանութեան եւ ՀՀ Դեսպանութեան կողմէ, որմէ ետք ներկաներէն իւրաքանչիւրը խոնարհեցաւ նորակառոյց յուշակոթողին առջեւ եւ կարմիր վարդ մը գետեղեց այնտեղ:

ԴԻԱՆ ԳԱՀԻՐԷԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կը տեղեկանանք թէ համայնքիս երիտասարդ անդամուհիներէն Տիկին Ռիթա Չաքարեան-Թոմաս, վերջերս Գահիրէի Գերմանական Համալսարանի Չանգուածային Լրատուութեան բաժինը գերազանց յիշատակութեամբ ավարտելով, արժանացած է Մագիստրոսի աստիճանին, մասնագիտանալով լրատուական աշխատանքները ղեկավարելու մէջ:



ստացած է Եգիպտոսի Միջազգային Համալսարանի (MIU) Չանգուածային Հաղորդակցութեան եւ Լրատուութեան (Mass Communication) բաժանմունքին մէջ, դարձեալ գերազանց յիշատակութեամբ՝ 3.89/4 (Excellent with high honor):

**«Տեղեկատու»-ն շերմօրէն կը շնորհաւորէ Տիկին Ռիթա Չաքարեան-Թոմասը՝ իր նուաճած պատուաբեր յաջողութեան հա-**

մար՝ 2008-ին, գերազանց արդիւնքով (93.3 %) ավարտած է Նուպարեան Ազգային Վարժարանի լրիւ ընթացքը:

**մար:**

**Մեր շնորհաւորանքները նաեւ իր հարազատներուն:**


Ռիթա իր համալսարանական ուսումը

«Տ»



**«ՅՕՇՈՏՈՒՎԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿԱՄ «ՀՈԳԻՆԵՐՈՒ ԱՃՈՒՐԴ»  
ՄԱՀՈՒՎԱՆ ՈՒ ԲՈՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԳԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԵԻՃԸ՝  
ՄԵԾ ԵՂԵՄԻՆԸ ՎԵՐԱԳՐԱԾ  
ԱՒՐՈՐԱ ՄԱՐՏԻԿԱՆԵԱՆ**

1918 թ. Նիւ Եորքի մէջ, անգլերէնով լոյս տեսաւ Յայոց Յեղասպանութեան ականատես-վերապրածի մը առաջին փաստավաւերագրական յուշագրութիւններէն մէկը՝ «Յօշոտուած Յայաստան» խորագիրով: Գիրքը ստեղծուած էր Արեւմտեան Յայաստանի Չմշկածագ գիւղը ծնած Արշալոյս Մարտիկեանի (յետագային վերանուանուած՝ Արորա Մարտիկանեան) պատմութեան հիման վրայ, որ կը ներկայացներ քսորի ճանապարհին դեռատի հայուհիի եւ



երկար ու փշոտ ճանապարհը: Տարագրութեան ընթացքին՝ թուրք եւ քիւրտ պաշտօնեաներու եւ ցեղապետներու հարեմներու մէջ, ան կ'ենթարկուի խոշտանգումի ու պատուազրկումի, 85 սենթով կը վաճառուի Մալաթիոյ, Ուրֆայի եւ Մուշի ստրկավաճառներու շուկաներու մէջ, սակայն չ'ընկճուիր:

Արշալոյս Մարտիկեան՝ հայկական ժանն Տ'Արքը, ինչպէս զայն անուանեցին ԱՄՆ-ի մէջ, կրելով երկու տարուան գազանային սարսափները,

իր տարագիր, բռնագաղթուած ժողովուրդին ապրած աներեւակայելի, անմարդկային փորձութիւններով լի սարսափները:

Նոյն թուականին, Յայ-Սուրիական Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի առաջարկով, Գալիֆորնիոյ «Մեթօ Կոլտուին Մայըր» շարժապատկերի ընկերութեան բեմադրիչ Օսքար Ափֆել նկարահանեց «Յոգիներու Աճուրդ» համը շարժապատկերը՝ գիրքի հիման վրայ:

2015-ի սկիզբը, Յայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտը հրատարակեց «Յօշոտուած Յայաստան» գիրքի հայերէն թարգմանութիւնը՝ Յայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով:

Արշալոյսը, Մարտիկեաններու բազմանդամ ընտանիքի երրորդ զաւակն էր. անհոգ մանկութիւն, անխռով ընտանեկան կեանք, ջուրակահարուհի դառնալու մանկական երագանք... Սակայն վրայ կը հասնի հայերու բնաջնջման հրէշային նախագիծը...

1915 թուական, Յունիս....

Կորսնցնելով ծնողքը, քոյրերը ու երեք եղբայրները, որոնք գազանաբար յօշոտուած էին իր աչքերուն առջեւ, հրաշքով փրկուած 14-ամեայ Արշալոյսը կ'անցնի բռնագաղթի, կոտորածներու, բռնի թրքացումի մղձաւանջային, սարսափներով լի

չ'ուրանար իր հաւատքը: Փախչելով Զեմալ Էֆենտիի հարեմէն, երկար թափառումներէ յետոյ, 1917թ. գարնան սկիզբներուն ան կը հասնի Երզրում, որ արդէն գրաւուած էր ռուսական բանակին կողմէ: Այնուհետեւ Յայ Ազգային Միութեան եւ Յայ-Սուրիական Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի միջոցներով, կ'անցնի Փեթերսպուրկ, ապա՝ ԱՄՆ եւ բնակութիւն կը հաստատէ Նիւ Եորք:

Արշալոյս կարելոր առաքելութիւն մը ուներ՝ աշխարհին հաղորդակից դարձնել Թուրքիոյ մէջ հայերուն դէմ իրագործուած ոճրագործութիւններուն: Այդ առաքելութիւնը ան կ'իրականացնէ նախ իր գիրքին, ապա՝ շարժապատկերին միջոցով, ուր կը պատմէ իր տեսած արեան բաղնիքներու ու մարդկային երեւակայութենէ դուրս դաժանութիւններու մասին:

«Յոգիներու Աճուրդ»ը Մեծ Եղեռնի մասին պատմող առաջին գեղարուեստական շարժապատկերն էր եւ առանձնայատուկ այն բանով, որ Արշալոյսը ինք անձամբ կը մարմնաւորէր գլխաւոր դերը, իր իսկ կերպարը՝ Արորա Մարտիկանեան անուան տակ: Այս դերով ան կը դառնար հայ շարժապատկերի առաջին դերասանուհին, մեծապէս աջակցելով նաեւ դերասաններու



հագուստներու, կերպարներու ստեղծման եւ տեսարաններու ճշգրիտ վերարտադրման աշխատանքներուն:

Բարեսիրական նպատակներով նկարահանուած այդ շարժապատկերին ամբողջ հասոյթը (30 միլիոն ամերիկեան տոլար) կը տրամադրուի Մերձաւոր Արեւելքի մէջ հաւաքուած 60 հազար հայ որբերու ապրուստի ապահովումին:

Շարժապատկերը առաջին անգամ կը ցուցադրուի 1919 թ. Փետրուար 16-ին, Նիւ Եորքի «Փլազա» հիւրանոցին մէջ, որուն ներկայ կը գտնուին Նիւ Եորքի գրեթէ 7000 նշանաւոր անձեր: Շարժապատկերը կը ցուցադրուի ԱՄՆ-ի 23 նահանգներու մեծ քաղաքներու մէջ, ինչպէս նաեւ Թորոնթոյի, Լոնտոնի, Փարիզի, Լահէյի, Սիտնէյի, Մելպուռնի, Պուլէոս Այրեսի, Յաւանայի եւ այլ վայրերու մէջ՝ ամենուր բացառիկ յաջողութիւններ ունենալով եւ արժանանալով «Դարակազմիկ Շարժապատկեր» գնահատանքին:

«Յոգիներու Աճուրդ»ը ունեցած է 3 տարբերակ եւ իւրաքանչիւրը մանրակրկիտ ստուգման ենթարկուած է Հայ-Սուրիական Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի նախագահ, ԱՄՆ-ի մօտ Մեծն Բրիտանիոյ նախկին դեսպան, լորտ Ճէյմս Պրայսի (որ բրիտանական կառավարութեան յանձնարարութեամբ հետաքննած էր հայկական ջարդերը) եւ Հենրի Մորկընթաուի (1913-1916 թթ. Թուրքիոյ մօտ ԱՄՆ-ի դեսպան) կողմէ՝ արժանանալով վերջիններու բարձր գնահատանքին:

Սակայն 1920-ին, Մեծն Բրիտանիոյ մէջ որոշ ժամանակ ցուցադրուելէ եւ երկրորդ անգամ քննութեան ենթարկուելէ վերջ, կ'արգիլուի եւ վերջնականապէս շրջանառութենէ կը հանուի շարժապատկերը, ինչպէս նաեւ ամերիկեան ու բրիտանական գրադարաններէն կը վերցուի «Յօշոտուած Հայաստան» գիրքը:

Շարժապատկերի ամբողջական տարբերակը՝ 85 վայրկեան տեւողութեամբ, ցաւօք, այսօր պահպանուած չէ, եւ միայն 1994թ. արժանթիւնահայ Էտուարտ Կոզանլեանի ջանքերով, յայտնաբերուած է ժապաւենէն հատուած մը, որուն մէկ օրինակը կը պահուի Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի մէջ:

Անկոտրում կամքի եւ չարին յաղթելու վճռականութեան մարմնացում հանդիսացած Արորան, հանրաճանաչ կը դառնայ իր դերակատարումով, սակայն չհանդուրժելով փառքի ճանապարհին հանդիպող բոլոր բարոյութիւններու ճնշումը, կը մերժէ զինքը աստղ դարձնելու հովիվուտեան բեմադրիչներու բոլոր փորձերը: Արշալոյսը չէր ուզեր իր անցած դժոխային ճանապարհը կրկին վերապրիլ. հոգեկան վերքերը տակաւին թարմ էին ու չսպիացած: Այդ մերժումին հետեւանքը կ'ըլլայ այն, որ արգելքի տակ կը դրուին եւ մոռացութեան կը մատնուին իր պատմութիւնն ու շարժանկարը:

Արորան կը վախճանի մենութեան մէջ՝ մերժուած բոլորին կողմէ:

Իր գիրքին մէջ, Արշալոյս Մարտիկեան՝ իր առաքելութեամբ ու իր պատգամով, իր ուղերձը յղած է մարդկութեան. «Գիրքս կը նուիրեմ այս սքանչելի երկրին՝ Միացեալ Նահանգներու բոլոր այն մայրերուն ու հայրերուն, որոնք իրենց դուստրերը դաստիարակած են ճշմարիտ հաւատով առ Աստուած:

Աչքիս առջեւ է մայրիկիս անշնչացած մարմինը՝ նետուած անապատ այն բանին համար, որ ականդած էր ինձի չուրանալ Յիսուս Զրիստոսը՝ մեր Փրկիչը: Ես տեսայ տանջամահ եղող հօրս, որ իր փոքրիկ աղջկան պատգամած էր. «Հաւատա՛ մեր Տիրոջը, թող Անոր կամքը կատարուի»: Ես տեսայ հազարաւոր գեղանի մայրերու սիրասուն դուստրերը, որոնք նահատակուեցան թուրքի մտրակին կամ դանակին հարուածներէն, անօթութենէ ու ծարաւէ կամ ալ քշուեցան գերութեան, որովհետեւ չուրացան իրենց քրիստոնէական փառաւոր հաւատքը:

Աստուած ողորմած եղաւ իմ հանդէպ եւ խնայեց կեանքս՝ հնարաւորութիւն տալով ազգիս փրկուած բեկորներու պատգամը փոխանցելու ամերիկացի ժողովուրդին, որպէսզի ամերիկացի իւրաքանչիւր հայր, իւրաքանչիւր մայր հասկնայ որ այն, ինչ պատմելու եմ այս գիրքին էջերուն մէջ, սիրոյ ու փառաբանութեան խօսք է առ Աստուած՝ իմ փրկութեանս համար:

*ԱՐՐՈՐԱ ՄԱՐՏԻԿԱՆԵԱՆ*  
*Լաթամ, Նիւ Եորք Դեկտեմբեր, 1918 թ.»*

«Տ»



## ԾԱՂԿԱՅԱՐԳ-ԱՐՄԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀԵԼՒՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Կիրակի, 4 Յոկտեմբեր 2015-ի երեկոյեան 7:30-ին, Յելիոպոլսոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ իգական սեռի անդամներն ու համակիրները առիթը ունեցան վայելելու ծաղիկներու յարդարումի ներկայացում մը՝ շնորհալի Տիկին Սիւզան Իշխանեանի կողմէ, որ հիւրաբար Գահիրէ կը գտնուէր այդ շրջանին:

Ակումբին շէնքին առջեւ, օդասուն տարածքին տեղաւորուած սեղաններուն վրայ, Սիւզանը արդէն իսկ սկսած էր շարել տեսակ-տեսակ ծաղիկներ ու ծաղկամաններ, որոնք հանդիսատեսներուն ներկայութեան պիտի վերածուէին մեկական արուեստի գործերու:

Շուտով աթոռները գրաւուեցան ներկաներուն կողմէ, որոնք չէին ուզած զրկուիլ այս հազուագիւտ առիթէն:

Գահիրէ ծնած եւ Նուպարեան Ազգային Վարժարանէն շրջանաւարտ եղած, սակայն 1970-ական թուականներու սկիզբի տարիներէն ի վեր ընտանեօք Սան Ֆրանսիսքօ հաստատուած, Սիւզան Իշխանեանը իր մայրենիին սահուն ու գեղեցիկ բառերով, շատ դիւրամատչելի ձեւով ներկայացուց այս խիստ բարդ արուեստը, որ ուսանելէ ու փորձառութիւն ձեռք ձգելէ աւելի նուրբ ճաշակի կը կարօտի:

Ան ներկաներուն հետ խօսելով մեկտեղ, արագ ու հեշտ երեւցող շարժումներով կ'ընտրէր ծաղիկները, տարբեր չափերու կը վերածէր զանոնք, տերեւազուրկ կ'ընէր (ջուրին մէջ մխրճուած մնալով նեխիլը արգիլելու համար) ու ամենապարզ ծաղկամաններու մէջ, ինքնատիպ յարդարումներով սքանչելի փունջեր կը կազմէր:

Ներկաներուն մեծամասնութիւնը կլանուած ու անշշուկ կը դիտէր եւ կը ջանար արուեստին նուրբ գաղտնիքներուն թափանցել:

45 վայրկեանի ընթացքին, մեկը միւսէն տարբեր ու գեղեցիկ, չորս ծաղկայարդարումներ շարուած էին սեղանին վրայ: Յարգելի դասախօսուհին սիրով բացատրութիւններ կու տար հարցեր տուողներուն:

Ակումբին Տիկնանց Յանձնախումբին անդամուհիները, գաղափարը ունեցած էին այս գեղեցիկ փունջերը նուիրել վիճակահանութեամբ բախտաւոր դարձած ներկանե-



րուն:

Մաղթեց որ Սիւզանը աւելի յաճախ այցելէ իր ծննդավայրը ու այս տեսակ դասախօսութիւններու շարքով ծաղիկներու հանդէպ սերն ու հետաքրքրութիւնը աւելցնէ համայնքիս մէջ:

Սիւզան Իշխանեան, ելեւմուտքի եւ տնտեսութեան վկայականը ստանալէ ետք, աշխատած է որպէս ելեւմտական վերլուծող, Սան Ֆրանսիսքոյի շատ մը դրամատուներու եւ անշարժ կալուածներու հաստատութիւններու մէջ: Սակայն բոյսերն ու ծաղիկները միշտ հմայած են զինք, ուստի հետեւած է պարտիզպանութեան ու ծաղկաբուծութեան դասընթացքներու: Անցնող 12 տարիներու ընթացքին, ան աշխատած է բարձրորակ հարսանիքներու ու ընկերային ձեռնարկներու ծաղկայարդարումներու ասպարեզէն ներս, ու իր աշխատանքները մեծապէս գնահատուած են:

Յռչակաւոր «Fleuramour» ընկերութեան երաշխաւորութեամբ, Սեպտեմբեր 2014-ին եւ 2015-ին Սիւզանը հրաւիրուած է Պելճիքա՝ Alden Biesen պալատը ծաղիկներով զարդարելու համար:

2002-էն ի վեր ան անդամ նշանակուած է համաշխարհային ճանաչում ունեցող «American Institute for Floral Designers» հիմնարկին:

Սիւզան իր հրաշալի աշխատանքներուն կողքին, մասնաւոր սեր ունի ուսուցանելու ու իր գիտելիքները փոխանցելու ուրիշներուն:

*Սօփ Ներտեան-Յակոբեան*



## **ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ ԱԽՈՅԵԱՆ ԿՐ ՀԱՆԳԻՍԱՆԱՅ ՀՄԸՄ ԿԱՄՔԻ 2015-Ի ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ**

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ Կամքի կազմակերպած ամենամեայ Եգիպտահայ Պասքեթ Պոլի մրցաշարքը տեղի ունեցաւ Ուրբաթ, 28 Օգոստոսէն մինչեւ Կիրակի, 30 Օգոստոս 2015, մասնակցութեամբ եգիպտահայ բոլոր մարզական միութիւններուն: Մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը Եգիպտոսի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ նախագահութիւնը Տէր եւ Տիկին Նուպար Սիմոնեանի՝ ատենապետ Գահիրէի Թեմական Ժողովին:

Առաջին օրուան մրցումը Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Ս. Թերեգայի խումբերուն միջեւ էր: Երկու խումբերն ալ հետաքրքրաշարժ խաղարկութիւն մը ցուցաբերեցին, միշտ չնչին կետերու տարբերութեամբ, սակայն ի վերջոյ յաղթանակեց ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 65-64 արդիւնքով:

Շաբաթ օրուան մրցումը, նախորդ օրուան յաղթական՝ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՀՄԸՄ Արարատի միջեւ էր, որ դարձեալ վերջացաւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաղթանակով՝ 66-33 արդիւնքով:

Այսպիսով, Կիրակի օրուան աւարտական մրցումին, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խաղաց Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ Կամքին դէմ, որը նախապէս պարտութեան մատնած էր Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 50-

49 արդիւնքով: Ուժերը անհաւասար էին եւ կետերու մեծ տարբերութեամբ (113-35) յաղթական հանդիսացաւ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ տիրացաւ Տիկին Մարլէն Գաղթացեանի կողմէ նուիրուած բաժակին:

Այս մրցումը առիթը ընծայեց Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, որ դաշտ իջեցնէ խոստմնալից պատանիներ, որոնք իրենց փորձառու երեց խաղընկերներուն կողքին, մեծ խանդավառութեամբ իրենց ճարտարութիւնը ցուցաբերեցին, բարձրացնելով իրենց խումբին կետերը, հակառակ ՀՄԸՄ Կամքի երիտասարդ խումբին ցոյց տուած զօրաւոր ընդդիմութեան:

Այս մրցաշարքին յաղթական հանդիսանալով, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ անգամ մը եւս փաստեց թէ վերջին քանի մը տարիներուն, իրեն վերապահած է մրցաշարքերու գերակայութիւնը:

Շնորհաւորութիւններ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն՝ իր տարած յաղթանակին համար, վարձքը կատար բոլոր մարզիկներուն, պատասխանատուներուն ու մարզիչներուն, եւ նորանոր յաղթանակներու լաւագոյն մաղթանքներ:

*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝  
Անայիս ճիգմեճեան*





## ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ ՅԱՂԹ-ԱԿԱՆ ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ ՊԱՍՏԵԹ ՊՈԼԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

ՀՄԸՄ Արարատի Պասքեթ Պոլի տարեկան մրցաշարքը տեղի ունեցավ Հինգշաբթի, 17 Սեպտեմբերին մինչև Շաբաթ, 19 Սեպտեմբեր 2015: Սոյն մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը Եգիպտոսի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Ս. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ Նախագահութիւնը՝ Յուսաբեր Մշակութային Միութեան ատենապետ Տոքթ. եւ Տիկին Սուրբն Պայրամեանի:

Հինգշաբթի, 17 Սեպտեմբերի առաջին մրցումը Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ միջեւ էր, որ վերջացավ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ փայլուն յաղթանակով, 67-31 արդիւնքով: Մինչ երկրորդ մրցումին՝ ՀՄԸՄ Արարատը պարտութեան մատնեց Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ Կամբը, կետերու մեծ տարբերութեամբ, տանելով փայլուն յաղթանակ մը 72-38 արդիւնքով:

Ուրբաթ օրուան միակ մրցումը Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Ս. Թերեզայի միջեւ էր եւ դարձեալ յաղթանակը ապահովեց ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ՝ 71-35 արդիւնքով:

Շաբաթ, վերջին օրը մրցումներուն, Նախքան երեց տղոց աւարտականի խաղը, ՀՄԸՄ Արարատի եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երեց աղջկանց խումբերուն միջեւ տեղի ունեցավ խիստ հետաքրքրական մրցում մը՝ հաւասար ուժերով, այնպէս որ հարկ եղաւ յաւելեալ ժամանակ մը եւս խաղալ, որուն վերջաւորութեան 52-47 արդիւնքով յաղթական



հանդիսացան ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները եւ բարձրացուցին Տեր եւ Տիկին Նուրիան Զիրքճեանի կողմէ սուիրուած բաժակը:

Վերջին խաղը, Նախորդ օրերուն մրցումներուն երկու յաղթական խումբերուն միջեւ էր՝ ՀՄԸՄ Արարատ եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ: Երկու խումբերն ալ գեղեցիկ եւ բարեկամական խաղարկութիւն մը ունեցան, սակայն առաջին քառորդախաղէն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ առաւելութիւն ապահովեց (25-10) եւ խաղը աւարտեցավ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց յաղթանակով (77-56): Եւ այսպիսով խումբը տիրացավ Տեր եւ Տիկին Վահրամ Կելրեկեանի կողմէ սուիրուած բաժակին:

Այս երեք օրերու մարզական հաւաքները առիթը ընծայեցին ՀՄԸՄ Արարատի կրտսեր խումբերուն, որ անոնք ալ մրցումներու մասնակցին: Այսպէս, 16 տարեկանէն վար տղաքը, աղջիկները, ինչպէս նաեւ «Մինի Պասքեթ» խումբերը մրցեցան «Էլ Նասր» եւ «Ալ-Չուհուր» ակումբներուն դէմ:

16 տարեկանէն վար աղջիկներուն բաժակը սուիրուած էր Տեր եւ Տիկին Րաֆֆի Մկրտիչեանի կողմէ:

ՀՄԸՄ Արարատի մրցաշարքը՝ 2015-ի Եգիպտական Համահայկական Պասքեթ Պոլի մրցաշարքերուն երրորդն էր: Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Նախորդներուն եւս յաղթական հանդիսացած էր:

Շնորհաւորելի է ՀՄԸՄ Արարատի Նորընտիր վարչութիւնը՝ մրցաշարքի լաւ կազմակերպման համար:

Շնորհաւորելի է ՀՄԸՄ Արարատի Նորընտիր վարչութիւնը՝ մրցաշարքի լաւ կազմակերպման համար:



*ՀՄԸՄ-ի կայքէջէն քաղեց՝  
Անայիս Ճիզմեճեան*



## **ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2015-Ի ՊԱՍ-ՔԷԹ ՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐ-ՔԸ**

Յեղիոպոլսոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տարեկան Եգիպտահայ Պասքէթ Պոլի մրցաշարքը տեղի ունեցաւ Զինգաբթի 8, Ուրբաթ 9 եւ Շաբաթ, 10 Զոկտեմբեր 2015-ին, Եգիպտոսի 6 Զոկտեմբերի յաղթանակին 42-րդ տարեդարձին առթիւ:

Սոյն մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը Եգիպտոսի Զայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանին եւ նախագահութիւնը՝ նախկին Եգիպտահայ սիրուած մարզիկ ու այժմ ամերիկաբնակ Տիար Ռիչարտ Բարմաքեանի: Երեք օրերուն յայտագիրները շատ ճոխ ու այլազան էին: Իւրաքանչիւր օր տեղի կ'ունենային երեք մրցումներ:

Մրցաշարքին բացումը կատարեց ակումբին տղոց «Մինի Պասքէթ»ի խումբը, որ խաղաց Ալ Թայարանի փոքրիկներուն դէմ: ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն մարզիկներէն ոմանք, առաջին անգամ ըլլալով, դաշտ կ'իջնէին հանդիսատեսներու ներկայութեան, իսկ ուրիշներ քիչ մը աւելի «փորձառու» ըլլալով, ինքնավստահօրէն կը խաղային: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Յեղիոպոլսոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբին 31-25 արդիւնքով ու յաղթական փոքրիկներէն ամէն մէկը, մեծ ուրախութեամբ, ստացաւ պատիկ բաժակ մը՝ նուիրուած սիրուած մարզիկ Սիմոն Տեփոյեանի կողմէ:

Վարձքը կատար խումբին պատասխանատու Պր. Արմէն Պալթայեանին եւ մարզիչ Մակետ Ահմետին, իրենց տարած համբերատար աշխատանքին համար:

Օրուան երկրորդ մրցումը ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 16 տարեկանէն վար աղջիկներուն եւ Ալ Թայարանի խումբերուն միջեւ էր: Զակառակ որ մրցակից խումբին աղջիկները աւելի հասակաւոր էին, սակայն ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները, իրենց արագ ու ինքնավրստահ խաղով, սկիզբէն իսկ առաւելութիւն արձանագրեցին ու հաճելի խաղ մը հրամցուցին ներկաներուն: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Յեղիոպոլսոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն 31-21 արդիւնքով, որոնք ստացան Տոքթ. եւ Տիկին Զրայր Տրդատեանի նուիրած բաժակը:

Նի նուիրած բաժակը:

Կը շնորհաւորենք խումբին պատասխանատու Տիկին Սեւան Տրդատեանը, այս խիստ կարեւոր խումբը կազմելուն եւ պահելուն համար, քանզի այս խումբին մարզիկուհիներն են, որոնք հետզհետէ կը միասնակումբին Ա. խումբին: Նաեւ վարձքը կատար մարզիչ Մակետ Ահմետին՝ իր պարտականութիւնը լիով կատարելուն համար:

Օրուան վերջին մրցումը ԶՄԸՄ Արարատի եւ Ս. Թերեզայի խումբերուն միջեւ էր: Խաղին գրեթէ բոլոր տեւողութեանը Ս. Թերեզայի մարզիկները մեծ ճիգ կը թափէին առաւելութիւն արձանագրելու համար, իսկ Արարատի մարզիկները կ'աշխատէին պարզապէս այդ առաւելութիւնը նուազեցնելու եւ հազիւ անցնելու: Արդիւնքի տարբերութիւնը մի քանի թիւ էր մրցումին բոլոր տեւողութեան ու ներկաները կրնային անակնկալի ականատես ըլլալ...

Սակայն վերջին վայրկեաններուն, Արարատի տղաքը մի քանի յաջող արձակումներով կարողացան 3 թիւի առաւելութիւն ապահովել ու մրցումը աւարտեցաւ շատ խոնարհ 45-42 արդիւնքով:

Ուրբաթ օրուան առաջին մրցումը ակումբին 16 տարեկանէն վար եւ Ալ Չուհուրի տղոց խումբերուն միջեւ էր: ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը շատ կազմակերպուած ու արագ խաղարկութեամբ սկսան խաղը ու բաւական առաւելութիւն արձանագրեցին: Երրորդ քառորդախաղէն սկսեալ, խումբին մարզիչը՝ փոխարինելով փորձառու մարզիկները աւելի նորեկներով, առիթը ընծայեց խումբին բոլոր 14 մարզիկներուն որ դաշտ իջնեն ու իրենց մասնակցութիւնը բերեն յաղթանակին:

Մրցումը աւարտեցաւ 33-18 արդիւնքով :

Վարձքը կատար խումբին պատասխանատու Պր. Ժիրայր Յակոբեանին, մարզիչ Ալաա Չահրանին եւ օգնական մարզիչ Մակետ Ահմետին, որոնց անդուլ աշխատանքին շնորհիւ ամէն տարի լաւ մարզուած պատանիներ կու գան միասնալու ակումբին տղոց Ա. խումբին: Յաղթական խումբը



ստացաւ ՏԵՐ ԵՆ Տիկին Ժիրայր Յակոբեանի նուիրած բաժակը:

Օրուան երկրորդ մրցումը Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԵՆ ՀՄԸՄ Կամքի միջեւ էր: Սկիզբէն յայտնի էր որ խաղը միակողմանի պիտի ըլլար, ուստի հիւրընկալ խումբին մարզիչը խաղէն հեռացուց լաւագոյն մարզիկներէն շատերը ու առիթը տուաւ խումբին բոլոր մարզիկներուն դաշտ իջնելու, որոնք սակայն ի յուսախաբուծութիւն Կամքի տղոց՝ հիանալի խաղարկութիւն ցուցաբերեցին ու մրցումը ավարտեցաւ 74-50 արդիւնքով՝ ի նպաստ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Օրուան վերջին մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԵՆ նախորդ օրուան յաղթական՝ ՀՄԸՄ Արարատի միջեւ էր: Մրցումը չկարողացաւ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել: Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խաղարկութիւնը անյաջող էր, իսկ ՀՄԸՄ Արարատը չէր ուզեր իր մարզիկները ի գուր յոգնեցնել, քանի որ յաջորդ օրը ավարտական մրցում պիտի խաղար Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ դէմ: Ձախող արձակումներէ ու դանդաղ յարձակումներէ ետք, մրցումը ավարտեցաւ 45-33 արդիւնքով՝ ի նպաստ ՀՄԸՄ Արարատին:

Շաբաթ օրուան առաջինը վեթերաններու միջեւ մրցում մըն էր: Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վեթերանները խաղացին ՀՄԸՄ Արարատէն, Ս. Թերեգայէն, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԵՆ ՀՄԸՄ Կամքէն բաղկացող վեթերաններու հաւաքականին դէմ: Նախկին վաղեմի մրցակիցներ, ահաւասիկ

տարիներ ետք, կրկին կը հանդիպէին իրարու, սակայն այս անգամ բարեկամաբար: Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վեթերանները գերազանցեցին միւսներուն ու մրցումը ավարտեցաւ ի նպաստ իրենց 38-33 արդիւնքով:

Վերջերս մեծ ժողովրդականութիւն վայելող, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԵՆ ՀՄԸՄ Արարատի աղջիկներու խումբին մրցումը, օրուան երկրորդ խաղն էր: Երկու խումբերն ալ տասնութական մարզիկուհիներով դաշտ իջան ու տաքնալ սկսան:

Շատ գեղեցիկ տեսարան էր, երբ մրցումը սկսելէ առաջ, երկու խումբերուն անդամները իրենց պատասխանատուներով ու մարզիչներով, շարուեցան դաշտին կեդրոնը՝ յիշատակի լուսանկարին համար:

Մրցումը սկիզբէն մինչեւ վերջ շատ տաք էր ու հետաքրքրական, քանի որ արդիւնքի տարբերութիւնը շատ քիչ էր: Հազիւ թէ մէկ խումբը պասքէթ մը կ'արձանագրեր, միւսը կարծէք կ'արձագանգեր ու տարբերութիւնը շատ յաճախ կ'իջներ մինչեւ մէկ կետի: Սակայն չորրորդ քառորդախաղին վերջին վայրկեանին, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները չորս թիւի առաւելութիւն արձանագրեցին, պահեցին զայն մինչեւ իրաւարարի սուլիչին վերջին սուլոցը ու մրցումը ավարտեցաւ ի նպաստ իրենց 36-32 արդիւնքով:

Բաժակը նուիրուած էր ՏԵՐ ԵՆ Տիկին Յակոբ Աբիկեանի կողմէ՝ ի յիշատակ ողբացեալ Միսաք Տէյիբմէնճեանի:

Վարձքը կատար պատասխանատու Տի-



կին Սօսի Յակոբեանին, խումբին մղիչ ուժ մարզիկուհի Մարլօ Սիմոնեանին, մարզիչ Ալաա Չահրանին եւ օգնական մարզիչ Մակետ Ահմետին, իրենց տարած աշխատանքին համար:

Ժամանակը հասած էր մրցաշարքին ավարտական մրցումին՝ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն եւ ՀՄԸՄ Արարատին տղոց խումբերուն միջեւ: Նախքան մրցումին սկսիլը, ակումբին ժրաջան ու սիրուած ատենապետ Պր. Ժիրայր Տեփոյեան խօսք ամառ ու շնորհաւորեց ներկաները 6 հոկտեմբերի յաղթանակի տօնին առթիւ, ապա յիշեց անունները ակումբին այն անդամներուն, որոնք վերջին տարուան ընթացքին անվերադարձ հրաժեշտ տուած էին կեանքին, ինչպէս՝ գանձապահ Լեւոն Նիկոլեան ու իր իննամեայ որդին՝ Անթօնին, որոնք Յունիսին գոհ գացին ինքնաշարժի արկածի մը, Նորայր Տօվլէթեան, ակումբին երիցագոյն անդամ Անդրօ Վարժապետեան, Տիգրանուհի Վարժապետեան, Վարուժ Վարժապետեան, ակումբին 60-ական եւ 70-ական տարիներու սկաուտպետ Հայկ Թելլալեան, Դաւիթ Կարինեան, Ալպեռ Չոփուրեան, Հրայր Շահրոզեան եւ Մարկրիթ Պալթայեան:

Մրցումը սկսաւ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ հանդարտ ու պաղարին խաղարկութեամբ. նոյնիսկ բոլոր լաւագոյն խաղացողները միեւնոյն ժամանակ դաշտին մէջ չէին գտնուեր: Այնպէս որ մինչեւ երկրորդ քառորդախաղին ավարտը, արդիւնքի տարբերութիւնը շատ չէր՝ 37-25 ի նպաստ հիւրընկալ ակումբին: Սակայն հետզհետեւ,

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն տղաքը սկսան ցոյց տալ իրենց իսկական մակարդակը ու ՀՄԸՄ Արարատի տղաքը յուսալքուելով, ստոյգ արձակումներ փախցուցին: Մրցումը ավարտեցաւ ի նպաստ Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն 77-46 արդիւնքով:

Օրուան բաժակը նուիրուած էր հիւրընկալ ակումբին վարչութեան կողմէ՝ ի յիշատակ ողբացեալ Լեւոն Նիկոլեանին:

Մրցաշարքին բոլոր մետայլները, ինչպէս միշտ, նուիրուած էին Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեանի կողմէ:

Վարձքը կատար խումբին պատասխանատու Պր. Յակոբ Գարակեօզեանին, ավագ մարզիչ Ամր Աշուրին եւ օգնական մարզիչ Ալաա Չահրանին, իրենց տարած աշխատանքին համար:

Յատուկ շնորհակալական խօսքի արժանի է Տիկին Սեւան Տրդատեանը, որ մրցաշարքին տեւողութեան ընթացքին, բարձրախօսը ձեռքին, մեծ համարձակութեամբ ու յստակ առողջանութեամբ կը կատարեր հարկ եղած յայտարարութիւնները, կը ներկայացներ մրցակից խումբերուն մարզիկները եւ հետաքրքրական ու երբեմն ալ գուարճալի մէջբերումներ կ'ըներ:

Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ հինգ պասքէթ պոլի խումբերը տիրացած են բաժակներուն:

Վարձքը կատար բոլորին:

*Սօսի Ներսէտեան-Յակոբեան*





## ՄԱՅ՝ ԱՆԴՐՈ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ

Անգամ մը եւս ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ անդամներէն հանրածանօթ եւ բարի բնաւորութեամբ, ազնիւ անձնաւորութիւն մը շիջեցաւ, Շաբաթ, 29 Օգոստոս 2015-ին, երբ տակաւին 40 օր չէր անցած իր կողակիցին՝ ողբացեալ Տիգրանուհիի մահուան վրայ:

Այս անգամ սիրելի Անդրոյին կարգն էր հրաժեշտ տալու իր ընտանիքին, բարեկամներուն եւ համայնքին, բարի գործերով լի կեանքէ մը վերջ:


Անդրո Վարժապետեան, փայլուն օրինակ մըն էր ընկերասիրութեան եւ ամենուն հետ բարեկամութեան:

Ան մահացաւ 90 տարեկանին, իր առողջական վիճակին յանկարծական եւ արագ վատթարացումով:

Ան երիցագոյն անդամն էր ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ընտանիքին, իր տարեկիցներուն այս աշխարհէն մեկնումէն յետոյ:

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ 30 Օգոստոս 2015-ին, Զելիոպոլսոյ Ամենայն Սրբոց գերեզմանատան մատրան մէջ, որմէ յետոյ թաղուեցաւ իր ընտանեկան դամբանին մէջ:

Անդրո Վարժապետեան անցեալ դարու 70-



ական եւ 80-ական թուականներուն, երկար տարիներ եղած է Զելիոպոլսոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան անդամ:

Ան եղած է սկաուտ եւ ակումբին փինկ փոնկի խումբին անդամ, ու հանդիսացած՝ այդ մարզաձեւին համայնքին լաւագոյն մարզիկներէն, անցեալ դարու 40-ականներուն վերջը եւ 50-ականներուն:

Իր մարզական գործունեութեան կողքին, ան երկար տասնամեակներ ծառայած է ԵԳՄ Զոգաբարձութեան մէջ եւ վերջին տասնամեակին փոխ ատենապետն էր այդ հոգաբարձութեան:

Գալով գործի ասպարեզին, ան հռչակաւոր եւ յաջող լուսանկարիչ մըն էր եւ լուսանկարած էր բազմաթիւ կարեւոր անձնաւորութիւններ, որոնց շարքին Եգիպտոսի Նախկին Նախագահ՝ Անուար Էլ Սատաթը եւ պետական ակադեմիան մաս կազմող բազմաթիւ անձնաւորութիւններ:

**«Տեղեկատու»ն իր անկեղծ ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալին ընտանիքին անդամներուն եւ ազգականներուն, այս ցաւալի կորուստին առիթով:**

## ՄԱՅ՝ ԶԱՅԿ ԹԵԼԼԱԼԵԱՆԻ

Խոր ցաւով կը յայտնենք մահը ԶԲԸՄ-ի երկարամեայ անդամ, եգիպտահայ մարզական եւ մշակութային կեանքէն ներս աշխոյժ գործունեութիւն ունեցած Զայկ Թելլալեանին, որ յանկարծամահ եղաւ Շաբաթ, 8 Օգոստոս 2015-ին:

Ողբացեալը մաս կազմած է Զելիոպոլսոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի պասքէթ փոլի խումբին եւ 1968-1974 եղած է նոյն ակումբին գայլիկներուն եւ սկաուտներուն խմբապետը:

1969-էն սկսեալ գործունեութիւն ունեցած է Կոկանեան Սրահին մէջ, ուր վարած է զանազան վարչական պաշտօններ:

Ան նոյնպէս աշխոյժ գործունեութիւն ունեցած է թատերական մարզէն ներս, Կոկանեան Սրահին թատերախումբին մէջ զանազան դերեր ստանձնելով:



1967-ին, ան Զայ Գեղարուեստասիրաց Միութեան թատերախումբին հետ բեմադրած է զանազան թատերգութիւններ:

Զայկ Թելլալեան իր երկար տարիներու գործունեութիւնը յառաջ տարած է համեստօրէն եւ անաղմուկ, պարտաճանաչութեամբ, բծախնդրութեամբ ու նուիրումով, միշտ վայելելով իր գործակիցներու սերն ու յարգանքը:

Գալով գործի ասպարեզին, ան շուրջ քառորդ դար աշխատած է օդանաւային ընկերութիւններու մէջ եւ հասած ղեկավար պաշտօններու:

**«Տեղեկատու»ն իր խոր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին այրիին՝ տիկին Յասմիկ Թելլալեանին, զաւակներուն՝ Կարոյին եւ Շուշանին եւ սգակիր բոլոր պարագաներուն:**



